ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 12-ը
Ռուսաստանի Դաշնություն ք. Մոսկվա
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.**
   Կարեն Բալայան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի պետ /Ժ.Թ"Պ/
   Նինա Գալուստյան-ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչության շնագիտական /կենտրոն/ բաժնի մաքսային տեսուչ
2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ռուսաստանի Դաշնություն ք. Մոսկվա, 2024թ.-ի թվականի սեպտեմբերի 29-ից հոկտեմբերի 12-ը:
3. **Հրավիրող կողմը.**
   Հրավերը ստացվել է 14"06.2024թ.-ին ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների ղեկավարների խորհրդի իրավապահ մարմինների ղեկավարների կոմիտեի գործադիր քարտուղար պարոն Օ.Վ. Բականովից :
4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Գործուղումը նախատեսված էր ՌԴ ք. Մոսկվայում կազմակերպվող «ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեության շրջանակներում կինոլոգիական ծառայության աջակցության արդիական հարցերը» թեմայով լրացուցիչ մասնագիտական ծրագրին մասնակցելու, ինչպես նաև՝ անասնաբույժի որակավորման բարձրացման միջազգային դասընթացների անցկացման ծրագրին մասնակցելու նպատակով:
5. **Քննարկված թեմաները.**
   Գործուղման ընթացքում քննարկվել են ստորև ներկայացված թեմաները

- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեության կազմակերպման արդի հիմնախնդիրները,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների շնավարժության գործունեության ոլորտի կառավարման կազմակերպման արդի հիմնախնդիրները,
- Շնավարժ-մասնագետների մասնակցությունը մաքսային հսկողության գոտիներում կազմակերպելու արդիական հարցերը,
- Մաքսային մարմինների կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների աշխատանքի սոցիալ-հոգեբանական ասպեկտները,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների կինոլոգիական ստորաբաժանումների միջազգային համագործակցության արդի հիմնախնդիրները
- Շնավարժության հիմունքների հարցերն ու պատասխանները:
- Տարբեր ցեղատեսակի շների գենետիկ հիվանդությունների հարցերը և դրանց առկայության դեպքում շների զուգավորման ժամանակ առաջացած խնդիրների հետ կապված հարցերը
- Լապորոսկոպիկ եղանակով տարատեսակ վիրահատությունների իրականացման հարցերը
- շների օֆտալմոլոգիական վիրահատության բարդությունների հետ կապված խնդիրները

- օրթոպեդիկ վիրաբուժության հիմնական խնդիրները, մասնավորապես շների և կատուների արհեստական հոդերի տեղադրման հետ առնչվող հարցերը

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Այցի շրջանակներում հանդիպումներ են տեղի ունեցել ՌԴ մանկավարժական գիտությունների թեկնածու դոցենտ տիկին Ս.Վ. Կորոլյովայի, ՌԴ մաքսային ակադեմիայի դեպարտամենտի ներկայացուցիչ Վ.Ա. Տուրբանովի, ՌԴ կենտրոնական մաքսատան ուսումնական կենտրոնի կադրերի պատրաստման պատասխանատու Վ.Ս. Պանովի, ինչպես նաև տեղում ծառայություն իրականացնող շնավարժների և անասնաբույժների հետ:

Քննարկվել են

- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեության շնավարժության աջակցության գործում դատաբժշկական ախտաբանության դրույթների կիրառման առանձնահատկությունները,
- Մաքսային գործունեության և վարչական հետաքննության բնագավառում վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարույթներին շների մասնակցության և աջակցության կազմակերպման հարցերը,
- Մաքսային մարմինների այլ իրավապահ ստորաբաժանումների հետ կինոլոգիական ստորաբաժանումների համակարգման և փոխգործակցության կազմակերպման հարցերը
- Մաքսային մարմինների օպերատիվ-հետախուզական գործունեության համար ծառայողական շների մասնակցության և աջակցության կազմակերպման հարցերը,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեությանը ծառայողական շների մասնակցության և աջակցության նպատակով ծառայողական շների վարժեցման և պատրաստման կազմակերպման հարցերը,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների քրեադատավարական գործունեության համար ծառայողական շների աշխատանքի կազմակերպման հարցերը.
- ԱՊՀ անդամ երկրների մաքսային մարմիններում ծառայողական շների պահպանման կազմակերպման հարցերը,
- ԱՊՀ անդամ պետությունների մաքսային ծառայությունների իրավապահ գործունեությանը ծառայողական շների աջակցության բարելավման ընթացիկ խնդիրներն ու խոստումնալից ուղղությունները,
- Ծառայողական շներին վարժեցնելու և կիրառելու ժամանակ թույլ տված հիմնական սխալները կանխելու և վերացնելու գործում շնավարժների աշխատանքի բարելավման ուղիներն ու միջոցները,
- Շների տարատեսակ թերապևտիկ հիվանդությունների վերաբերյալ հարցերը և անասնաբուժական միջոցների կիրառումը և դրանց արդյունավետությունը

Գործուղման ընթացքում Նինա Գալուստյանը այցելել է ք. Մոսկվայի «МЕДВЕТ» անասնաբուժական կլինիկա, որտեղ մասնակցել է շների և կատուների դիագնոստիկ ախտորոշմանը, մասնավորապես՝ կատարվել է սրտի էխոգրաֆիա, որովայնի խոռոչի ուլտրաձայնային հետազոտություն, ռենտգեն հետազոտություն: Այցելել է ինտենսիվ թերապիայի բաժանմունք ծանոթանալու տեղի սարքավորումների և դրանց հետ աշխատանքի նպատակով:

Այցելել է ք. Մոսկվայի Կ.Ի Սկրյաբինայի անվան անասնաբուժության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիա և տվյալ ակադեմիային պատկանող բուժա-դիագնոստիկական անասնաբուժական կենտրոն, որտեղ այցելել է 1939թ.-ից ստեղծված անատոմիական թանգարան, ծանոթացել տնային, վայրի կենդանիների և թռչունների կմախքների, որովայնի խոռոչի, շնչառական համակարգի, աղեստամոքսային տրակտի միզասեռական համակարգի, արյունատար անոթների և նյարդային նմուշների հետ: Ծանոթացել է նաև տեղի լաբորատորիայում վերոնշյալ նմուշների ստեղծման տեխնիկայի հետ:

Կենտրոնում այցելել է կենտրոնի համակարգչային տոմոգրաֆիայի հատուկ բաժին, ծանոթացել՝ տեղի սարքավորման և սարքավորման աշխատանքի հետ: Այցելել է նաև կենտրոնի վերարտադրողական բաժանմունք, որտեղ արհեստական պայմաններում ստանում էին շան էմբրիոններ, որոնք տեղադրվում են սուրոգատ էգին:

Գործուղման ընթացքում Նինա Գալուստյանը մասնակցել է

- շան միջողնաշարային ճողվածքի հեռացման վիրահատությանը,
- կատվի աչքի հեռացման և աչքի արհեստական ցանցի տեղադրման վիրահատությանը
- շան լեղաքարային և երիկամների քարերի հեռացման լապորոսկոպիկ վիրահատությանը
- շան կոնքազդրային արհեստական հոդի տեղադրման վիրահատությանը

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

   Գործուղումը նախատեսված էր վերապատրաստման դասընթացներին մասնակցելու նպատակով, հետևաբար որևէ նոր որոշում չի ընդունվել և փաստաթղթեր չեն ստորագրվել: Վերապատրաստման դասընթացի ավարտին ինչպես Կարեն Բալայանին, այնպես էլ Նինա Գալուստյանին շնորհվել են համապատասխան որակավորման սերտիֆիկատներ:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:**

   Գործուղման ընթացքում ձեռք է բերվել պայմանավորվածություն՝ ՌԴ Շերեմետևո օդանավակայանի բազայի հիման վրա 2025թ.-ին կազմակերպել ՀՀ ՊԵԿ ՄԴՊՎ շնագիտական /կենտրոն/ բաժնի շնավարժների, շնավարժ-հրահանգիչների և իրենց կցված ծառայողական շների ուսուցումն ու վերապատրաստումը:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը**

Կարեն Բալայան

Նինա Գալուստյան

«15» Հոկտեմբերի 2024թ.